ՀՏԴ՝ 929:75(479.25)Շիշմանյան+070(479.25)
DOI: 10.54503/2579-2830-2024.1(11)-129

ՌԱՖԱՅԵԼ ՇԻՇՄԱՆՅԱՆԸ ԵՎ «ԱՆԱՀԻՏ» ՀԱՆԴԵՍԸ

ՌՈՒԶԱՆ ԱՆԱՆՅԱՆ*

Հղման համար. Անանյան, Ռուզան: «Ռաֆայել Շիշմանյանը և «Անահիտ» հանդեսը»: *Արվեստագիտական հանդես,* N 1 (2024): 129-135. DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-129

«Ռաֆայել Շիշմանյանը և «Անահիտը»» հոդվածում ներկայացված է գեղանկարիչ, արվեստի տեսաբան Ռաֆայել Շիշմանյանի (1885-1959) արվեստաբանական գործունեությունը, մասնավորապես անդրադարձ է կատարվել «Անահիտ» հանդեսի 1930, 1937 և 1940 թվականների համարներում տպագրված հոդվածներին: Երկար տարիներ ապրելով Ֆրանսիայում՝ ստեղծագործական գործունեությանը զուգահեռ, Ռ. Շիշմանյանը զբաղվել է արվեստաբանական խնդիրների ուսումնասիրությամբ, անդրադարձել է հայ և օտարազգի արվեստագետների ժառանգության և առանձին ստեղծագործությունների մանրազնին վերլուծությանը: Հայալեզու և օտարալեզու հանդեսներում հրատարակել է բազմաթիվ վերլուծական հոդվածներ, որոնք կարևոր և արժեքավոր են հայ մշակույթի ուսումնասիրման գործում: Զգալի ժամանակ նվիրելով արվեստաբանությանը, ցավոք, Շիշմանյան-արվեստաբանի գործունեությունը առ այսօր առանձին հետազոտության նյութ չի հանդիսացել: Սույն հոդվածը ևս մեկ փորձ է լրացնելու այդ բացը:

Նյութում անդրադառնում և վերլուծության ենք ենթարկում «Անահիտ» հանդեսի էջերում հանդիպող երեք՝ «Անթուան Պուրտէլ», «Նկարիչ Վ. Մախոխեան» և «Անհետացող արուեստագէտներ. Զարեհ» հոդվածները: Նյութը շարադրված է ժամանակագրական կարգով:

Բանալի բառեր՝ Ռաֆայել Շիշմանյան, ֆրանսիական շրջան, արվեստաբան, «Անահիտ» հանդես, «Անթուան Պուրտէլ» (1930), «Նկարիչ Վ. Մախոխեան» (1937), «Անհետացող արուեստագէտներ. Զարեհ» (1940):

Ներածություն

Հայ արվեստի զարգացման գործում արժեքավոր ներդրում ունի Հայաստանի արվեստի վաստակավոր գործիչ, գեղանկարիչ և արվեստաբան Ռաֆայել Շիշմանյանը (1885-1959): Գեղանկարչությանը զուգահեռ նա զբաղվել է հայ արվեստի ուսումնասիրությամբ, հեղինակել մի շարք հոդվածներ և գրքեր: Նրա հոդվածները տպագրվել են հայալեզու և օտարալեզու մի շարք հանդեսներում: Իր արվեստաբանական գործունեությամբ նա մեծ ներդրում ունեցավ թե՛ Հայաստանի սահմաններից դուրս, թե՛ հայրենի հողում ազգային արվեստի զարգացման գործում՝ թարմ շունչ հաղորդելով մեր նորաստեղծ պետության մշակութային կյանքին:

Կյանքի մի մասն ապրելով հայրենիքից դուրս՝ Ռաֆայել Շիշմանյանը Ֆրանսիայում ճանաչում է գտել որպես փորձառու գրախոս և արվեստի տեսության մասնագետ: Հայալեզու և օտարալեզու հանդեսներում պարբերաբար տպագրվող

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի ասպիրանտ, ruzan92.92@mail.ru, հոդվածը ներկայացնելու օրը՝ 17.05.2024, գրախոսելու օրը՝ 31.05.2024, տպագրության ընդունելու օրը՝ 03.06.2024:

Շիշմանյանի հոդվածները եվրոպական միջավայրում նպաստեցին հայ արվեստի լուսաբանմանը:

Հիմնական նյութի շարադրանք

Գեղանկարիչ, արվեստաբան Ռաֆայել Շիշմանյանը 1908-1947 թթ. բնակվում էր Ֆրանսիայում[1]: Ֆրանսիայի հայկական գաղութն այդ ժամանակաշրջանում ծավալում էր մշակութային բեղուն գործունեություն: Արվեստի հայ ակնառու գործիչներից շատերը մասնագիտական կրթություն ստանալու համար նախընտրում էին հենց Ֆրանսիան: Նրանց մի մասը, կրթության ավարտից հետո, վերադառնում էր հայրենիք, իսկ մի մասն էլ բնակություն էր հաստատում Ֆրանսիայում:

Ռաֆայել Շիշմանյանի հրատարակած հոդվածները հաճախ են հանդիպում հայալեզու և օտարալեզու հանդեսներում: Բացառություն չէր լայն ճանաչում ձեռք բերած «Անահիտ» հանդեսը, որի խմբագիր Արշակ Չոպանյանի պատկերավոր խոսքերով՝ «Մենք ունէինք արդէն, այստեղ, Ռաֆայէլ Շիշմանեանը, որ ինքն ալ Ակնեցի, զարդանկարչութեան արուեստի մէջ շնորհալի ու նուրբ տաղանդ մը ի յայտ կը բերէ տարիներէ ի վեր. ան ընդհանրապէս արևելեան ու մասնաւորապէս հայկական հին զարդարուեստի աւանդութիւններէն ներշնչուելով, զանոնք վերանորոգելով ու անոնցմէ անձնական ստեղծագործութիւններ հանելով է որ արտադրած է իր փափուկ գործերը որ գրքերու, թերթերու կողքերը, տարեգիրքերու էջերը կը պճնեն ու որոնցմով նկարազարդուած է ամբողջ ֆրանսերէն հատոր մը» [6, էջ 93]:

1898-1911 թթ. և 1929-1949 թթ. (ընդմիջումներով) Փարիզում հրատարակվող «Անահիտ» գրական-գեղարվեստական հանդեսը բացառիկ էր հայ մշակույթի, գրականության զարգացման գործում[2]:

«Արևմտահայ հասարակական կյանքի և գրական ընթացքի կենսական պահանջներով հրապարակ «իջած» հանդեսը ըստ էության, արգասիքն է նրա խմբագրի՝ Արշակ Չոպանյանի անհատականության. գրողի ու քննադատի նրա եռանդուն ջանքերի, ստեղծագործական ու գաղափարական հղացումների» [1, էջ 7]:

Հանդեսի բովանդակությունը պետք է պարունակեր.

«1. Ուսումնասիրություններ հայ ժողովուրդին պատմության, գրականության, գեղարվեստին ու լեզվին վրա, և տեսություններ անոր ներկա բարոյական ու նյութական կացության մասին.

---

[1] Մարտին Միքայելյանը, անդրադառնալով Ռաֆայել Շիշմանյանի Փարիզում հաստատվելուն, գրում է. «1908 թվականին Փարիզի մայթերին հայտնվեց բարեկազմ ու գեղեցկադեմ մի երիտասարդ, որին մշտաշառաչ այդ քաղաքում (ինչպես կասեր Ալիշանը) ոչ ոք չէր ճանաչում: Հայկական, խոշոր աչքերով այդ երիտասարդը Ռաֆայել Շիշմանյանն էր...» [8, էջ 1]:

[2] Հանդեսի առաջին փուլի ուսումնասիրությամբ զբաղվել է լեզվաբան Յուրի Ավետիսյանը [տե՛ս 1, էջ 228]: Երկրորդ շրջանի մասին տե՛ս [2, էջ 273-288]:

2. Ուսումնասիրություններ գեղարվեստական, գիտական և ընկերական ընդհանուր խնդիրներու վրա.

3. Թարգմանություններ օտար հին ու նոր մատենագրությանց ամենեն կարևոր հրաշակերտներուն.

4. Վեպեր, վիպակներ և բանաստեղծություններ ազգային կամ առհասարակ արևելյան կյանքին և այլն» [1, էջ 56-57]:

«Անահիտ»-ի 1930 թվականի հանդեսում հանդիպում ենք ֆրանսիացի քանդակագործ Անտուան Բուրդելի (1861-1929) ստեղծագործական գործունեությունը լուսաբանող հոդված, որտեղ հայազգի արվեստաբանը նրան համեմատում է Օգյուստ Ռոդենի հետ[3], վերլուծության է ենթարկում մի քանի աշխատանք, խոսում գեղարվեստական արժեքներից ու նշում Բուրդելի արվեստի շահեկան կողմերը:

«Իր տեղը, կարելի է ըսել, թափուր մնացած է, քանի որ ցարդ իր հասած արուեստի բարձրութիւնը թռնող մը չունինք: Պուրտէլի մեջ մարդն ու արուեստագէտը՝ նոյնացած հազուագիւտ կատարելութեան մը մէջ՝ օրինակելի տիպար մը կը դարձընեն զինքը յաւերժապես» [3, էջ 21]:

Գեղանկարիչ-արվեստաբանը մտերմություն ուներ հայ արվեստագետներից շատերի հետ[4]: Հիշենք 1926 թ. մի շարք անվանի արվեստագետների նախաձեռնությամբ առաջին անգամ եվրոպական միջավայրում կազմակերպվող ֆրանսաբնակ հայ նկարիչներին, քանդակագործներին, ճարտարապետներին միավորող «Անի» (1926-1931) Հայ արվեստագետների խմբակցությունը, որի հիմնադիրներից և պարբերաբար վերընտրված նախագահներից էր Ռաֆայել Շիշմանյանը: Թերևս դա է պատճառը, որ հեղինակի հոդվածներն առավել հետաքրքրական են:

1937 թվականի «Անահիտ»–ի 3-4-րդ համարի էջերում տպագրվում է «Նկարիչ Վ. Մախոխեան» հոդվածը, որը գրվել է Մախոխյանի մահից հետո: Նյութում հեղինակը ծովանկարչին ներկայացնում է որպես լուրջ, խոհուն անհատականություն՝ օժտված աշխատասիրությամբ ու անկեղծությամբ:

Շիշմանյանը գրում է. «Մախոխեանի վարպետին յայտարարութիւնը՝ եթէ ճիչդ է՝ կը վերաբերի նկարչական թեքնիքի այն հիմնական գիտելիքներուն, որոնք անհրաժեշտ են մէն մի նկարչի համար իբրև արուեստագիտական արտայայտութեան քերականական օրէնքներ եւ իբր բառամթերք:

Այդ օրէնքներուն եւ բառամթերքին ազատօրէն կիրարկութիւնը ուսումնարանէն դուրս ձեռք կը բերուի, յամառ եւ յարատեւ աշխատութեամբ» [5, էջ 69]:

Մախոխյանին ներկայացնելով օրինակելի կերպար՝ հոդվածագիրը քննության է առնում նրա արվեստի առանձնահատկությունները: Նյութի սկզբնական

[3] Ա. Բուրդելն աշխատել է Ռոդենի արվեստանոցում:

[4] Դրա մասին են վկայում Հայաստանի ազգային պատկերասրահի հուշաձեռագրային բաժնի Շիշմանյանի անձնական արխիվում պահվող բազմաթիվ նամակագրությունները [տե՛ս 7]:

մասում անդրադարձ կատարելով ուսումնառության, պատանեկության տարիներին, անցնում է Փարիզում բնակություն հաստատելուն: Ընթերցողին փորձում է «համոզել», որ ծովի պատկերներից հետո գեղանկարչի նախընտրած թեման ձմռան տեսարաններն են[5]: Հոդվածում Շիշմանյանը ներկայացնում է Մախոխյանի մասնակցությամբ մի քանի ցուցահանդեսները, խոսում ներկայացվող աշխատանքների մասին:

Ապա կարևորում է 1924 թվականին Նիսի թանգարանի կողմից իր նկարի գնումը:

Արվեստաբանն ընդհանրություններ է նկատում Մախոխյանի և Այվազովսկու ծովանկարների միջև: Ընդգծելով Այվազովսկու վրձնի ակնհայտ ազդեցությունը Մախոխյանի ծովանկարների վրա՝ հեղինակն ընթերցողի ուշադրությունը սևեռում է առաջին գծի ալիքների վրա, որտեղ երկու նկարիչն էլ միանման են վրձնում ճերմակ ու թափանցիկ երկարաձիգ փրփուրները, նշում, որ Մախոխյանի մոտ դրանք ավելի համոզիչ են ու ռեալ:

Ուշագրավ է «Անհետացող արուեստագէտներ» հոդվածը, որում հեղինակն անդրադառնում է Զարեհ Գալֆայանին, Հերան Շաբանին: Նյութից պարզ է դառնում, որ Զարեհ Գալֆայանը որպես գծագրության ուսուցիչ է աշխատել Կ. Պոլսի հայ վարժարաններում, այդ թվում՝ նաև Կեդրոնական վարժարանում: Այնուհետև հեղինակն անդրադառնում է հայ նկարչի՝ զրկանքներով կյանքին, դժվարություններով Փարիզ հասնելուն ու հաստատվելուն: Հոդվածում նշվում է, որ Փարիզում գնահատվել է Գալֆայանի տաղանդն ու նա արժանացել է մի շարք մրցանակների:

Այս հոդվածը, ինչպես նաև վերը նշված նախորդ երկու հոդվածները, գրվել են արվեստագետների մահից հետո: Հեղինակը նյութի սկզբնական մասում ցավով ներկայացնում է Զարեհ Գալֆայանի և Հերան Շաբանյանի կյանքից հեռանալը: Հոդվածը բաղկացած է երկու մասից. առաջինում ներկայացված է Շիշմանյանի պատկերավոր խոսքով ասած՝ բյուրեղյա վճիտ նկարագիր ունեցող և խոհուն համեստ բնավորության տեր անհատականություն հայ նկարիչ Զարեհ Գալֆայանը (1887-1939): Ընթերցողը ծանոթանում է նկարչի կյանքին, ուսումնառությանը, ստեղծագործական գործունեությանը: Հոդվածագիրը, շեշտադրելով նկարչի կայացման գործում ուսումնական հաստատությունների կարևորությունը, զուգահեռ անդրադառնում է նրա աշխատանքային գործունեությանը: Շիշմանյանի հոդվածից տեղեկանում ենք, որ Փարիզում Զարեհը տասներեք տարի զբաղվել է խճանկարչությամբ, իսկ 1931 թվականին Փարիզում կազմակերպված միջազգային մեծ ցուցահանդեսին նրա խճանկարն արժանացել է ոսկե մեդալի: Նյութի հաջորդ մասում Շիշմանյանը ներկայացնում է Զարեհին արդեն որպես բնանկարիչ: «Այս ուղղութեամբ իր արտադրած գործերը պայծառ

[5] Նյութի ընթերցումից պարզ է դառնում, որ ծովի գայթակղիչ պատկերներից հետո Վ. Մախոխյանին գրավում են ձմեռային տեսարանները, որոնց պատկերումը դառնում է ճակատագրական նկարչի արդեն խարխլված առողջության համար:

կենսունակութիւնով օծուն եւ իրապաշտ նրբին դիտողութիւններով լի գունագեղ էջեր են» [4, էջ 6]:

Ներկայացնելով Գալֆայանի կյանքի վերջին տարիները՝ արդեն տեսնում ենք նրան, որպես դեկորատիվ կիրառական արվեստի ներկայացուցիչ:

Հոդվածի երկրորդ մասը նվիրված է ֆրանսահայ նկարիչ Հերան Շաբանին (1887-1939): Նյութում քննարկվում է մի քանի հարցեր, այդ թվում նկարչի անժամանակ ընդհատված կյանքը: Նկարչին ներկայացնելով որպես առույգ, կատակասեր և կենսասեր անձնավորություն՝ հոդվածագիրն ընդգծում է պայծառ ու հարուստ գունահարաբերումները, գեղարվեստական լեզվի առանձնահատկություններն ու ինքնատիպությունը:

Եզրակացություն

Գեղանկարիչ և արվեստաբան Ռաֆայել Շիշմանյանն իր մշակութային ակտիվ գործունեությամբ կապվեց Փարիզի հայկական համայնքի հետ՝ նպաստելով ազգային մշակույթի տարածմանը:

Աշխատակցելով մի շարք հանդեսների (ներառյալ նաև «Անահիտ» հանդեսը)՝ հրատարակեց ուշագրավ նյութեր նկարիչների ստեղծագործական կյանքի ու ոճակատարողական հատկանիշների մասին: Նրա հրատարակած հոդվածներն արժեքավոր նյութ են հանդիսանում հայ և օտարազգի արվեստագետների ժառանգության լուսաբանման համար:

Գրականություն

1. Ավետիսյան Յու. «Անահիտ» հանդեսը. Երևան, 1999, էջ 227:
2. Ավագյան Վ. Արշակ Չոպանյանը և «Անահիտ» հանդեսի երկրորդ շրջանը, «Աստվածաբանական և կրոնագիտական հոդվածների ժողովածու». Երևան, 2022, հ. 2, էջ 273-288:
3. Շիշմանյան Ռ. Անթուան Պուրտէլ, «Անահիտ», 1930, հ. 3, էջ 20-30:
4. Շիշմանյան Ռ. «Անհետացող արուեստագէտներ», «Անահիտ». Փարիզ, 1940, հ. 5-6, էջ 5-8:
5. Շիշմանյան Ռ. Նկարիչ Վ. Մախոխեան, «Անահիտ». Փարիզ, 1937, հ. 3-4, էջ 69-74:
6. Չօպանեան Ա. Քրոնիկ, «Անահիտ». Փարիզ, 1929, հ. 1, էջ 89-101:
7. ՀԱՊ, ՀՁԲ (Հայաստանի ազգային պատկերասրահի հուշաձեռագրային բաժին, Երևան), (Ֆ-108, նամակագրություններ):
8. ՀԱՊ, ՀՁԲ (Հայաստանի ազգային պատկերասրահի հուշաձեռագրային բաժին, Երևան) (Միքայելյան Մ., Ռաֆայել Շիշմանյան, 1970, Ֆ-108, Տ-25, ԹՊ-60, ԻՆՎ. - 40222):

References

1. Avetisyan Yu. “Anahit” handesy. Yerevan, 1999, ej 227.
2. Avagyan V. Arshak Chopanyany eb “Anahit” handesi erkrord shrjany, “Astvacabanakan ev kronagitakan hodvacneri jhoghovacu”. Yerevan, 2022, h. 2, ej 273-288.
3. Shishmanyan R. Antuan Purtel, “Anahit”, 1930, h. 3, ej 20-30.
4. Shishmanyan R. “Anhetacogh aruestagetner”, “Anahit”. Pariz, 1940, h. 5-6, ej 5-8.

5. Shishmanyan R. Nkarich V. Maxoxean, “Anahit”. Pariz, 1937, h. 3-4, ej 69-74.
6. Chopanean A. Qronik, “Anahit”. Pariz, 1929, h. 1, ej 89-101.
7. HAP, HDB (Hayastani azgayin patkerasrahi hushaderagrayin bajhin, Yerevan), (F 108, namakagrutyunner):
8. HAP, HDB (Hayastani azgayin patkerasrahi hushaderagrayin bajhin, Yerevan) (Miqayelyan M., Rafayel Shishmanyan, 1970, F-108, T-25, TP-60, INV. - 40222).

РАФАЭЛ ШИШМАНЯН И ЖУРНАЛ «АНАИТ»

РУЗАН АНАНЯН*

Для цитирования: Ананян, Рузанна. “Рафаэл Шишманян и журнал «Анаит»”. *Искусствоведческий журнал,* N 1 (2024): 129-135. DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-129

В статье «Рафаэл Шишманян и журнал «Анаит»» представлена деятельность живописца, теоретика искусства Рафаэла Шишманяна (1885-1959) как искусствоведа, в частности рассматриваются статьи, напечатанные в журнале «Анаит» в 1930 г., 1937 г., 1940 г. За время проживания во Франции параллельно с творчеством Р. Шишманян занимался изучением искусствоведческих проблем, изучал творчество армянских и зарубежных художников, тщательно анализировал отдельные произведения. В армянских и иностранных журналах опубликовал множество статей, которые важны и ценны для изучения армянской культуры. Деятельность Шишманяна-искусствоведа, несмотря на то, что он много времени посвятил искусствоведению, до сих пор не являлась темой изучения. Данная статья – еще одна попытка восполнить этот пробел.

В материале рассматриваются и анализируются статьи «Антуан Бурдель», «Художник В. Махохян», «Исчезающие художники. Заре Галфаян», напечатанные в журнале «Анаит». Материал изложен в хронологическом порядке.

Ключевые слова: Рафаэл Шишманян, французский период, искусствовед, журнал «Анаит», «Антуан Бурдель» (1930), «Художник В. Махохян» (1937), «Исчезающие художники» (1940).

*Аспирант Института искусств НАН РА, ruzan92.92@mail.ru, статья представлена 17.05.2024, рецензирована 31.05.2024, принята к публикации 03.06.2024.

RAPHAEL CHICHMANIAN AND "ANAHIT" JOURNAL

RUZAN ANANYAN*

For citation: Ananyan, Ruzanna. "Raphael Chichmanian and "Anahit" journal", *Journal of Art Studies,* N 1 (2024): 129-135. DOI:10.54503/2579-2830-2024.1(11)-129

The article "Raphael Chichmanian and "Anahit" journal" discusses the artistic endeavors of painter and art historian Raphael Chichmanian (1885-1959), focusing on his contributions to the journal "Anahit", published in 1930, 1937, and 1940. Having spent many years in France, Chichmanian not only pursued his creative work but also engaged in researching artistic issues. He conducted detailed analyses of the heritage and individual works of both Armenian and foreign artists. He has published numerous critical articles in both Armenian and foreign language journals, which are essential and valuable for the study of Armenian culture. Although Chichmanian dedicated considerable time to studying art, unfortunately, his work has yet to be the focus of a separate research study. This article seeks to address that gap.

He wrote three articles: "Antoine Bourdelle", "Painter W. Makhokian", and "Vanishing Artists: Zareh Kalfayan, Heran-Chaban". The material is organized chronologically.

Key words: Raphael Chichmanian, French period, art historian, "Anahit" journal, "Antoine Bourdelle" (1930), "Painter V. Makhokhian" (1937), "Vanishing Artists" (1940).

* PhD student at the NAS RA Institute of Arts, ruzan92.92@mail.ru. The article was submitted on 17.05.2024, reviewed on 31.05.2024, accepted for publication on 2024.